Ծրագրով պահանջվող փաստաթղթեր

Մինչ վարկավորումը

- Անշարժ գույքի սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, որում ամրագրված է, որ հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների է,
- Հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիրը (հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրված լինելու դեպքում), ընդ որում, հողամասի կառուցապատման իրավունքի ժամկետը պետք է կազմի վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից հաշված՝ առնվազն 10 տարի,
- Նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատերերի) համաձայնությունը ջերմատան կառուցման համար՝ համասեփականատերերի առկայության դեպքում,
- Ջերմատան նախագիծ,
- Նախահաշիվ,
- Նախագիծը թողարկող պատասխանատուի երաշխավորագիրը՝ ծրագրի պահանջներին նախագծի համապատասխանության վերաբերյալ:

Ջերմատան կառուցման ավարտից հետո* 2 ամսվա ընթացքում

- Շինարարության ավարտական ակտ և դրա հիման վրա իրականացված պետական գրանցումը հաստատող անշարժ գույքի սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն,
- Կապալառուի կողմից տրված շինարարության որակի մասին երաշխավորագիր,
- Կապալառուի հետ կնքված պայմանագիր:

Ֆիզիկական անձանց դեպքում

- Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթի պատճենը կամ պետական ռեգիստր վարող մարմնի կողմից հանրային ծառայությունների համարանիշ ստանալու կամ հրաժարվելու վերաբերյալ տրվող տեղեկանքի բնօրինակ,
- Որպես վարկի ապահովման միջոց հաճախորդի կողմից առաջարկվող գրավի սեփականութունը հաստատող փաստաթղթեր,
- Երաշխավորների և/կամ գրավատուների անձնագրերի պատճեններ,առկայության դեպքում ամուսնության վկայականներ,
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերանձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է

«Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

Իրավաբանական անձանց դեպքում

- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,[1]
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),[1]
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,[1,2,3]
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,[3]
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:

*** Ջերմատան կառուցումը պետք է իրականացվի վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 1.5 տարվա ընթացքում**

1 Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:
2 Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:
3 Կարող է ներկայացվել Բանկի կողմից վարկը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո: